

ԳԵՎՈՐԳ ԽԱԼԱԹ

ՀՈԿՏԵՄԲԵՐԱԿԱՆ

(ԲԱՆԱՍՏԵՂՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

1923—1928

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Պ.-Հ. Բ. Ը.
Թ Ի Ֆ Լ Ի Ս — 1929 թ.

891.99


Խ-17

891.99

12-17

19 NOV 2011

ՊՐԻՆՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ!



891.99-1

ՀՈԿՏԵՄԲԵՐԱԿԱՆ

(ԲԱՆԱՍՏԵԼԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Պ. Ն. Ը.

(1923—1928)



Ք Ի Յ Լ Ի Ս — 1929 թ.



Տպ. Հրատ. «Զարյա Վոստոկա»-յի Ռուսիայի պրեսային, 36.
Գլավլիտ 435 Պատվերներ 983 Տիրաժ 1000.

ՀՈԿՏԵՄԲԵՐՆ ՈՒ ՅԵՍ

Իմ հոգում նոր արև է ծագում,
աշխարհն է լսյն բացվում, խորանում.
անցյալիս ցավերն եմ մոռանում՝
նոր արև է ծագում իմ հոգում:

Հիմա յես յեռանդ եմ ու խենթ յերգ,
բացում եմ դռներն իմ փակ հոգու,
չեմ վախում այս կյանքից ահարկու,
ժպտում եմ աշխարհին անեղբրք:

1917 թ.

ԱՄԵՆՈՒՐԵՔ

Բորբ մրրիկն է յեկել բոսոր,
շառաչում է աշխարհով մեկ,
վոճրի շենքը ցնցում այսօր,
վոր տապալի արյունաներկ:

Սուր յերկունքով նորն է ծնել՝
ջահել արև կենսատեսիլ,
ճակտին հնգթե աստղը հինել
և կանչում է խիզախ ու զել.

— Հէյ, բանվորներ Արեւուտքի,
Արեւելքի ըստրուկ ազգեր,
Թափանցեք խորքն իմ մեծ մտքի,
Քանդեք ձեր մեջ արնոտ կարգեր:

. . . Ու յեղնում են վարար—վարար
զանգվածները հալալ ջանքի,
զարկում համառ, վոր բռնավար
կարգը շրջեն անարգանքի. . .

1923 թ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՅԵՐԹԸ

Հազար խոչ-խութից՝ հաղթական ու սեղ
Մասնան ե ծփում հորձանք առ հորձանք.
լանջերին վառ նիշ՝ հաղթանքի պարծանք,
դեմքերին ցնծում, շրթներին կանչ, յե՛րբ:

Աչքերն առնական վճռանքով վառված,
ուսերին մուրճեր՝ մանգաղներ, հրացան,
խենթ ընկերների արյունով ներկված
առջնն ալ դրոշ վեհորեն ծածան
ու վրան վորոշ և անջինջ գրված.

«Կռիվ անխընա,
մինչև Կոմունա» . . .

1923 թ.

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻՆ

Գաղջ նկուղներում, կարիքում ծնված՝
կառուցել ես շեն քաղաքներ տիտան.
ցամաքի, ծովի խորքերը փակված՝
բացել հաղթ բազկիդ դարկոյն առնական:

Յերկաթազծով յերկիրն ես ցանցել,
ծովերը կապել նավերով հսկա,
պրոպելլերներով ողուղի բացել,
լստեղծող ուժիդ սահման, վերջ չկա:

Բեռնած գրնացքի նման փնջոցով՝
աշխատանքիցդ իսկ անմաս՝ տանջալի
տարել ես բեռդ՝ խճճված ցանցով
արյունդ քամող սնրդ կապիտալի:

Ու քանի անգամ պոռթկացել հպարտ,
շղթադ ես փշրել, ազատվել փորձել,
բայց վոճիրն արնոտ լարել ե թակարդ՝
ըմբոստ պոռթկումըդ անսիրտ սղոցել . . .

Ցամառն հրաբուխն ես բորբոքել հըրթեմ,
շղթադ ես հալել մեր յերկրում արդեն,
լավա յես նետում չորս դեղ, վոր շանթես,
մոխիր դարձրես վոճիրն արնադեմ:

Յե՛վ կդարձրես, փռչին կհանես,
տանջված յերկիրը կազատես ընդմիշտ,
աշխատանքի շեն աշխարհ կտանես . . .
Վողջո՛ւյն հաղթանքիդ, գալիքիդ անվիշտ:

1924 թ

ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

Շչակներն ախորժ համերգում են զիլ,
փողոցում ըշտապ քայլերի կուռ ձայն,
առավոտի պես, թարմ, հաղթատեսիլ
բանվորն և գնում գործի ժրաջան:

Սոժոռ սոժահա՛
գործարանն ահա,
գրկում իր հազար մարդ ու մեքենա,
բեռնրված տնքում,
ճշում և, զնգում,
լարված մկանունք, թափ ու հեվք և նա:

Ահա, տես, բյուրաշք հնոցը շնչում,
նետում և կայծեր,
կես մերկ, քրտնաթոր բանվորներ փնչում,
յերկաթն հրաջեռ
շոգեգործիքով դնում մեծ սալին,
թակում են, թակում,
հրում տապակում,
հաղթ շոգեմուրճով դարբնում կենսալին:

Ահա ձուլարանն,
ազահի նման,
հալոցքն և լափում,
կաղապարներում արագ ու պես-պես՝
ձուլում ու թափում
գործիքներ հրկեզ:

. . . Յեվ անիմների, փոկերի շաչում,
պողպատի ճշում, ժխոր—շառաչում
մեքենա ու մարդ
իրար են ձուլվում, պայքարում անպարտ,
կառուցում զվարթ
Գալիքն աննման՝
տենչած կոմունան:

1924 թ

ԵՔՍՊՐԵՍՈՒՄ

Շոգին վոգի յե տվել
յերկաթին,
յերկաթն հուզվել՝
լուսին ու մութին
փնչում և,
հեվ ի հեվ
թոչում
անթե,
քամու պես թեթե:
Եքսպրես . . .
Անվի նման,
շրջան առ շրջան,
արագ
պլտլտվում են, խենթերի պես,
դաշտերը, ծառերը, հեռագրասյուները
խառնակ . . .

Եքսպրես...
. . . Հիմա նոյան սալի պես,
այնպես
դանդաղ և թվում
նա մեզ . . .

Հիմա պրոպելլերներով հնձել,
ջնջել ենք
ժամանակի դաշտերն անվերջ . . .
Հիմա եքսպրեսն ել ի՞նչ . . .
— Հե՛չ,

դանդաղ սալի ճռի՛նչ,
եղ վոչի՛նչ, վոչի՛նչ . . .

1924 թ.

Ելեք տրոույժը գյուղն եւ արշավել՝
նավթի ճըրագն եւ վառ լույսով վաճում.
հին ջըրաղացին հարված եւ տվել,
գեղջուկի ճպոտ աչքերն եւ բանում:

Գեղջուկը՝ հենված իր ձեռնափայտին,
ուրախ նայում եւ անվի պտույտին.
— Զան, իվան ախպեր, կուռդ սաղ ըլի,
վոր մեր մուրթ գեղն արիւր լուսալի:

Մատորն հոնդում, իվանն եւ ժպտում
ու ձեռքը մեկնում գյուղացուն խնդուն.
— Տուր ձեռքդ, ընկեր, միաձույլ գործենք,
վոր Կոմունայի աշխարհն ըստեղծենք:

1924 թ.

ԱՂՈԹՔՆԵՐԻ ՏԵՂ

Կոմսոմոլն յեկել ժամի տանիքին
գմբեթն եւ քանդում . . .

Խաչը՝ հնազանդ մուրճերի գարկին,
նզովք չի շանթում . . .

. . . Ու գմբեթն ընկավ շոինդով հսկա՝
չղջիկն եւ ծվում:
«Աստըծու տանն եւ աղոթք չըկա»,
պառաջն եւ նվում . . .

Խավարի տունը ակումբ եւ հիմի,
ալ լույսն եւ հաղթում:
Կոմսոմոլն անվախ տենչած Կոմունի
ճամփան եւ հարթում . . .

Յեւ յեկեղեցում եւ «սրբեր» չկան,
«կույս աստվածածինն» ընկած եւ տրտում,
ու եւ չի ծխում խունկն «անապական»,
աղոթքների տեղ՝ աշխատանք, խնդում:

1924 թ.

Մ Ե Ն Ք

Խիզախ կանգնել ենք, փարոսի նման,
փոթորիկներին ալ լույս ենք նետում,
ճամփա յենք նշում դեպի Կոմունան...

Կեղեքման մահը դրել ենք հերթի,
խավարն ենք լուսում մտքի եւ հոգու,
գըրոհ ենք տալիս կըրոնի բերդին . . .

Յերկրաշարժի պես ցնցեղ, ահարկու,
մեր վախն եւ պատեղ դեղին յեղեքին,
աշխարհն եւ դողում՝ զառամ, բանսարկու . . .

Մըրիկ ենք նետել վողջ տիեզերքին,
փոթորկվում եւ նա, ինչպես գուռ ովկյան
ու արձագանքում մեր մըրիկ-յերգին:

Խիզախ կանգնել ենք, փարոսի նման,
փոթորիկներին ալ լույս ենք նետում,
ճամփա յենք նշում դեպի Կոմունան:

1924 թ.

1871—1917

Շղթայաթափ, բորբ կոմունան
ըմբոստ, բանվոր Փարիզի,

սրախողխող սրտի նման՝
պարտված կռվում Որհասի,
հիմն անմահ, ալ հուր վառել

մեր յերկրում,
Վոճիրն այրել, վըրեժն առել
ու բերկրում,
ցնծերգում ե շղթազերծ,

աշխատանքի,
գալիք կյանքի
հիմքը դարբնում՝ կուռ ու պերճ:

Յեվ ընդվզման դանդն ե հնչում,
դողանջում,
զերթ սավառնակ, ձայնը թռչում,
զի՛լ կանչում.

— Զարթնե՛ք, յելե՛ք, մրրիկի պես
մրոտ, քաղցած միլիոններ,
փշրեք կապանք, ամրոց ժանտտես,
գահեր, արնոտ որենքներ...

Յեվ լսում ե բանվոր մասսան՝
սրտում ցասման ուռմբ, վառող,
համառորեն ու անսասան՝
հիմքն ե փորում արյունոտ,
վոր տապալի
կապիտալի
շենքն սև կարգը առհավետ,
դասը լուծի
ու կառուցի
անդաս կարգ մի խնդավետ:

1924 թ.

ՏԱՐԵՐՔԸ

Տափաստանում բազմածեծ
մի առտու

Հոկտեմբերի Հոգմը մեծ,
հատու

փչեց
և սև ու դեղին

բոլոր
պարազիտներին
պոկեց, իրար խճճեց
ու փոշու մեջ ճզմեց . . .

Ապա յեկավ,
ինչպես հեղեղուն սեկավ,
դեզ առ դեզ, սրարշավ
հորդեց դեպի Վարշավ . . .

. . . Յետ թռավ,
գնդվեց,
հսկա բրոսնցք դառավ
ո՛ւ, բո՛ւհ, փլվեց
դեպի Հարավ . . .

Յեվ բյուրավոր
սև ու դեղին,
բոլոր
պարազիտներին
բուռն առավ,
փետփետեց,
կատղած ճզմեց ու Սև ծովը նետեց . . .

Յեվ հիմա,
անահ
թռչում ե
Նա
դեպի արևմուտք, արևելք,
փլչում ե
ցամաքի, ծովի վրա
ու ամենուրեք
հնչում ե
մի յերգ՝
Մահ
անխընա
սև ու դեղին
բոլոր
պարագիտներին . . .

1924 թ.

ՄԻ ՍԵՐ

Յեռք ես կենսալի,
ծիծաղ զընդուն,
ինչպես իմ սալի
զնգոցը խնդուն:
Մեքենայիս պես,
առողջ ես, սիրուն.
յերբ տեսնում եմ քեզ
դողն ե ինձ տիրում . . .
Քո սերն իմ կյանքին
խնդերգ ե հնչում,
իմ աշխատանքին
նոր թափ ներշնչում:

Յեռք ես կենսալի,
ծիծաղ զընդուն,
ինչպես իմ սալի
զնգոցը խնդուն:

1924 թ.

ԱՆՄՈՒԱՅԸ

. . . Ու այսօր հրակ
մեր յերկրի վրա
ինչքան ու ինչքան,
ասողերի նման,
հառած աչքեր կան . . .

Յեվ այդ վշտալի աչքերում բյո՛ւր-բյո՛ւր,
ինչպես արեւ ծովում հայելի,
լենինն ե ցոլում՝ պարզած աջը կուռ
ու մասսաներին իր իմաստալի
խոսքերով թովում,
պատգամ ե տալի.

«Մեծ կովի բովում
մահ կապիտալին,
կապիտալին մահ . . .
Անհառաչ,
անահ
առանջ, միշտ առաջ
դեպի Կոմունա»:

Յեվ այսօր հրակ
մեր յերկրի վրա
ինչքան, ո, ինչքան
արևանման
հառած աչքեր կան . . .

1925 թ.

ԶԻՆ ԿՈՒԼԻԻՆ

Ո՛ր, դեղին ռասսան . . .
դարերով հեծված
էն ծեծված
մասսան՝
հորդ տարերք հիմի,
հրվեժ
վուրկան մի
ժայթքել ե հրեշ
կապիտալի դեմ,
յեռում,
փրփրում,
հիմքերը քերում,
դիրքերն ե փլում
ու աշխարհով մեկ
կանչում արնաներկ.
— Յեկե՛լ ենք, կելնե՛նք,
վոր մերը հիմնենք,
մերն ազատակիր,
խնդուն մի յերկիր . . .
Ու ամեն կողմից,
մոտիկից, հեռվից
բյու՛ր, միլիոնավոր
գյուղացի, բանվոր
արձագանքում են
ու սրտանց գոչում.
— Ըմբոստ տարերքիդ,
ազատ գալիքիդ
մեր կյանքն ու վողջո՛ւյն,
մեր կյանքն ու վողջո՛ւյն:

1935 թ.

ՄԵՐ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ

Գեղջուկը հիմա տերը իր ջանքի
յեռում ե, ինչպես արևը դարնան.
Ել չկան որերն անվերջ զրկանքի,
ազատ ե, խնդուն, իր յերկրի նման:

Նստել են շուրջը կըրակի անուշ,
վորդիներ, հարսներ, պապն ու մայրը մեծ,
թոռը կարգում ե «Մաճկալ»-ը՝ աշխույժ,
լսում են ըզգաստ, գորովով անկեղծ:

«Մաճկալ»-ը խոպան ուղեղն ափսոսում,
լենինի մտքի սերմերն ե ցանում.
Նրանց առորյա ցավերից խոսում
ու կոմունայի լայն ճամփան բանում:

Գեղջուկն ու «Մաճկալ»-ն իրար են գրկել՝
թեթե ե պայքարն յերկուսով տանել,
դարձել են իրար անբաժան ընկեր,
վճռել են հինը արմատից հանել:

1926 թ.

ԻՄ ՅԵՐԿՐՈՒՄ

Հե՛յ ջան, յերկիրն իմ
կապանքն իր ջարդել,
սևը ձգել դեն,
հագել ալ վարդեր
ու յերջանկադեմ
ժպտում ե նազով:

Հիմա իմ յերկրում
եւ չկան սուգ, սով,
հիմա իմ յերկրում
հերկ,
յերգ,
ցանք,
ցնծանք
ու ախորժ բերկրում:

Հիմա իմ յերկրում
տրակտորն ե հերկում,
հիմա իմ յերկրում
Փաբրիկը յերգում:

Իմ յերկրի մեջքին
նոր-նոր կամուրջներ,
ինչ հարսի ձեռքին՝
ապարանջաններ:

Իմ յերկրի արթուն
յերկաթե թռչունն
որվա լազվարթում
նոր յերգ ե հնչում:

Ջրերն իմ հողի
թափուր չեն հոսում,
եւեքտրադողի
լեզվով են խոսում:

Իմ յերկրում խնդուն՝
շունչ, շաչ ու շփնդ,
կառուցման թնդյուն,
աշխատանքի խինդ:

1026 թ.

«...ԴԵՌ ՅԵՏԱՄՆԱՑ»

Մոտոցիկլը վռնդ,
կարծես բռնած գրնդ,
սլանում ե, թռչում . . .

Ե՛ս, ե՛ն ափին
հյուղերը,
գյուղերը,
մշուշված քնում,
յետ ե՛ն մնում . . .

Ճամփին
յեզները խլած,
գյուղացիք պլած
նահանջում են, փախչում . . .

— Ա՛յ, ա՛յ, ա՛յ . . .
յետ եք մնացել, յետ,
դեռ յե՛զ, սա՛յլ . . .
կեղտի մեջ, աղբի հետ . . .

Ու սլանում ե, թռչում
մոտոցիկլը վռնդ,
վոնց վոր մի յերագ . . .

Ցեռեր՝ փռում
յեզները խլած,
գյուղացիք պլած
դիտում են, շշնջում.
«Գնա՛ց . . .

Իսկ մենք՝ դեռ . . . յետամնաց»:



ԳՈՐԾԱԶՈՒՐԿԸ

«ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ
ԹԻՎԸ ՀԱՍԱՎ 1.400.000-Ի»
ՀԵՌԱԳԻՐ

Գեմքը գունատ, աչքերի մեջ խենթ
մի տենդ՝
կապիտալի մեծ քաղաքի
փողոցներում վոսկեշուք,
շրջում է նա սուր կարիքի
ճակտին դըրոշմ տրամաշուք:

Տանը քաղցած, գրպանն անփող,
հինգ կիսամերկ փոքր ու մեծ
ճչում են. «Հա՛ց», ճչում անոգ
ու գալարվում աղեկեզ . . .

Շուկայումն ել նույնն ամեն օր՝
«Գործ չկա, չե, չկա գործ» . . .
Յեվ ընկնում են աստղերը նոր՝
մանուկները սովակորզ . . .

1928 թ

ՊԱՀԱԿԸ

Սահմանամերձ

գյուղում մի
վաղեմի,
ձյունների մեջ,
սուր ցրտին,
հրացանն ամուր սեղմած սրտին,
կամովի
պահակ է նա՝
Տամբովի
գյուղերից մի . . .

Ու հսկում է զըվարթուն,
արթուն՝
բանակայինը կարմիր,
յերկիրն իր
ալ,
անծայրածիր,
ինտերնացիոնալ:

Յեվ գիտե նա,
վոր վաղը հին
կյանքը մթին
կ'ալանա . . .
եւ չեն լինի
սահման բռնի
ու պահանքեր աղամա:



Իմ բանվոր ընկեր.

Մայիսի մեկին
դրոշմ քո ձեռքին
եւ ամուր պահիր,
ու խնդությունը,
ազատությունը
յերգիր քո կարմիր:

Ապա եւ անդու
հւժ տուր կուռ աջիդ,
պողպատե մուրճիդ
ու եւ յեռանդուն
հասցըրու տրակտոր
քո են քրտնաթոր
գեղջուկ ընկերոջ,
վոր հողը հերկի,
կանաչով ներկի
հանդերը մեր վողջ:

Իմ գեղջուկ ախպեր.

Մայիսի մեկին
ալ դրոշակին
եւ ամուր փարիր
և խնդությունը՝
ազատությունը
յերգիր քո կարմիր:

Ապա եւ ավել
թափ տուր քո բազկին,
տրակտորիդ վազքին
ու եւ անձնվեր՝
հողերդ հերկիր,
կանաչով ներկիր,
հաց տուր քո անխոնջ
բանվոր ընկերոջ,
վոր զավողը մեր
որն ի բուն թանչի
ու շչակն անմեռ,
կենսալի կանչի,
վոր թշնամին՝ մեր
կամքը ճանաչի . . .

Ու Մայիս-մեկին
դեղին աշխարհի
բանվորին, գեղջկին
ձեն տանք սրտալի,
վոր նըրանք եւ մեր
հեղափոխական,
անմար ու անմեռ
և արեգական
խնդին ու յերգին,
յեռքին ու հերկին
սրտաբուխ ձեն տան,
կապանքը քանդեն,
դուրս նետվեն բանտեն
ու մեզ պես խնդան:

ՀԱՏՎԱԾՆԵՐ „ԿՈՆԵԿՏԻՎԸ“ ՊՈԵՄԻՑ

ԱՎԱՆԸ

1.

Բլրի վրա վաղեմի
լայն թառած,
վոնց արագիլ, ավան մի
ծվարած:

2.

Ավանի մեջ
շուկա մի մեծ,
վաճառատուն,
արհեստանոց,
ութ գինեություն,
մի դպրոց:

3.

Ավանում հարրանք, ծեծկոց, բամբասանք
ու անցած կյանքի անդոր ափսոսանք:

Վ Ա Ս Ա Ն

1.

Սուրհանդակ եր թովուման,
ագիտ-պունկտում վասան մեր,
կքած գրքերի վրա
անհագուծյամբ կարդում եր:

Ագիտվարչի ցուցմունքով
աբտագրում եր լուրեր նոր,
փողոցներում խնամքով
փակցնում նա ամեն ուր:

Կիրակի, տոն որերին
գեղջուկներին հավաքած՝
կարդում եր նա որ-որին
դեկրետներ նոր արձակած:

2.

Կարդում եր նա լրագիր,
ագիտացիոն բրոշյուրներ,
պարապում եր ուշադիր
ու չեր քնում գիշերներ:

Նրա պատանի հոգին
շուտ հասկացավ, թե ինչու
մեկն ապրում եր տանջագին,
մյուսը՝ անդարդ, վոնց թռչուն:

Նա ըմբռնեց, թե ինչու
ինքն անուսում, խեղճ մնաց,
իսկ հարևան չաղ չարչու
տղան բարձրագույն գնաց:

3.

Ու փոթորկվեց մեր վասան,
գնաց, կոմյերիտ գրվեց,
աշխատավոր հոծ մասսան
նրան ել սիրով գուրգուրեց:

Աշխատանքովն իր անդուլ
շուտով սիրելի դարձավ,
կոմսոմուլի յեռանդուն
ակտիվի շարքերն անցավ:

ՇԱԲԱԹՆՈՐՅԱԿԸ

1.

Լուսաբացին փողը հնչեց զե՛լ ու լա՛յն.
կոմյերիտներ, կոմունիստներ ավանի
քըլունդներով, բահով, կացնով դուրս յեկան,
հավաքվեցին հրապարակը Լենինի:

2.

Խորդ ու բորդ եր և նեղ ճամփան ջրաղացի,
սալսկներն ել անցնում եյին խիստ դժվար,
աղուն, ալյուր առած մեջքին ավանցին
չարչարանքով յեկնում եր վեր, իջնում վար:

3.

Խմբի առջև կանգնած վասան խանդավառ՝
բռնած ունի ալ դրոշը գորովով.
— Պատրաստ, ձայնեց քարտուղարը ղեկավար...
առաջ շարժվեց խումբը խրոխտ յերգերով:

4.

Ճամփին նրան միացան
գլուղացիներ շրջանից
ու ավելի լիաձայն
հնչեց յերգը խնդալից:

5.

Արեգակի տակ
քըլունգն է գնդում,
ծառի հաստ բնին
կացինը տնքում:
— Հեյ, նայեք, նայեք
մեր վասային մեկ.
լավ ճառել գիտե,
աշխատել՝ յերբեք:

6.

Հանաքն է շնչում,
ծիծաղը հնչում...
Աշխատանք, հանաք
ու որն է թռչում:

7.

Յերեկոն փոեց թեերն իր մթին...
— Շաբաշ, հեյ, շաբաշ... լսվում է չորս դին...
Ու խումբը դադրած տուն վերադարձավ,
քըլունգով, կացնով, բահերով բարձած:

ԱՎՈՒՄԲՈՒՄ

1.

Գիշեր է աստղոտ ու լուս-լուսընկա...
Ակումբն է լեցուն ջահել—ահելով...
Տոմսեր են ուզում, տոմսակ ել չկա
ու հեռանում են լուռ դժգոհելով:

2.

Բեմի ճակատից կիրկնեխտն է դիտում,
լենինը նայում, խելացի ժպտում...
Կոմքարտուղարը ժողովն է բացում,
«Ինտերնացիոնալ»-ն ըմբոստ շառաչում:

3.

Կըրոնի մասին Սեթն է զեկուցում,
ջահել ու ահել լսում են ուշով...
«Կըրոնը թույն է, մտքի բթացում,
հարուստն է իշխում այդ թոյնն ժշուշով
ու յերկար դարեր մեզ շահագործում:
Յենենք կրոնի, այդ թույն-մոլոր դեմ...
Կեցցե՛ ստեղծագործ միտքը լուսադեմ»:
Ջահելների կանչ, ծիծաղ, զիլ աղմուկ...
Ահեղների մեջ՝ ակնարկ խաչմերուկ,
շշուկ,
փսփսուկ...

ԱԿՏԻՎԻՍՏԸ

1.

Ինքնազարգացմամբ յելավ Վասան մեր,
ԿՅԵՄ-ի շրջկումի դարձավ հրահանգիչ.
Վոտքով կամ ձիով շրջում եր գյուղեր,
հրահանգում անխոնջ, կազմում նոր բջիջ:

2.

Աշկերտների մեջ նոր բջիջ կազմեց.
դասախոսում եր, զեկուցում կարդում,
ուսուցչի նման, թափում յեռանդ մեծ
ու ԿՅԵՄ-ի համար ակտիվ պատրաստում:

3.

Բջիջի որն է ... Կցված այն գյուղին,
վոտքով է գնում ամառվա շոգին,
քրտնել է ամբողջ՝ յերկար է ուղին...
բայց գնում է նա, ուրախ է հոգին:
— Ա՛, բարե, Վասա, — դեմն յեկան սիրով
ընկերներն աշխույժ...
. . . Վասան պարապեց և դարձավ ձիով
նա գիշերը ուշ:

4.

Թղթակցում եր նա հաճախ թերթերին,
գրում եր մեկ-մեկ նաև հոգվածներ,
ուշիմ վեր հանում դրականն ու թերին,
առնում ու տալիս զրչի հարվածներ:

ՆԱԽԱԳԱՀԸ

1.

Նախագահը շրջգործկումի՝
բանվոր Կոլյա Ռոնքաձին,
աշխատանքում, ասես հոլ մի,
պտտվում եր ժիր, անձին:

Հեռախոսով գյուղեր ցանցեց,
կառուցեց և հեռագիր,
ավանի մեջ պարտեզ գցեց,
դպրոց բացեց լուսակիր:

Ընդարձակեց հին թատրոնի
շենքը՝ ընկած անանուն,
ելեքտրական նոր կայանի
հիմքը դրեց ավանում:

Ձորբաներից հողեր խլեց,
բատրակներին բաժանեց...
Խեղճությունը նրան սիրեց,
ուսեվորը խաչ հանեց:

(1924 թիվը)

1.

Շրջկումն ե լեցուն... Յերիտ, կոմունիստ
լսում են ուշով: Խոսում ե հանգիստ
քարտուղարը.— Հն, ունենք տեղեկանք,
վոր հակառակը ցույց են տալիս կյանք...

Յերկրում գործում ե պարիտետ մարմին,
ապրտամբություն պատրաստում մեր դեմ...
Կալանենք «մերոնց» տեղում մի առ մի,
դիրքեր գրավենք մինչև լուսադեմ:

— Ընկեր քարտուղար, փամփուշտներ քիչ են,
հրացանները մեր մաշված են, հեշ են...

— Բազոյին ղրկենք կենտրոն եղ գործով,
մենք ել ըզբաղվենք «վորսալու փորձով»:

2.

— Տղերք, «հարսնիք» կ'ունենանք,
յեղենք նագան ու թվանք...
Իսկ Սոլոն անձայն գրլուխը քորեց.
«Լավ չե, եհ, լավ չե», ինքն իրեն խորհեց:

3.

Ու ամեն գիշեր՝
պահակ դիրքերում,
ժիր ջահել ու ծեր
հսկում են, յեռում:

4.

. . . Լուսադեմին
բլրի շեմին
լավեց պայթ մի հրացանի,
դիրքը շարժվեց
ու վողջ լարվեց.

— Կնց, կըրակ մի բաց անի...

. . . Ու գըրոհ մի անգուսպ, հատու...
հրացանների ճարճատում...
Արյուն, ճըշոց մեռնող մարդու...
Նորից նոր գրոհ, պայթպայթում...

ՆՈՐԻՑ

(1924 թիվը)

1.

Գնդակներն են նորից վզգում ահալի,
ժիր գնդացիներ աշխույժ շաղում խինդ ու մահ...
գեղջուկներն են վոտքի յեղել կատաղի.
«հող են տալիս» գորբաներին անխընա...

2.

Մենչեկյան բանդան փախավ հետապինդ,
կոմունարներն ավանն առան մարտական...
ջահել, ահել, գյուղացիներ լացախինդ
դեմներն յեղան կարմիրներին հաղթական...

3.

. . . Նորից ֆուռաց կարմիր դըրոշն ավանում,
արևի պես խինդը փովեց ամեն հյուղ...
Աշխատանքն ե համառ իր ուղին բանում՝
խրճիթներին տալիս նոր կյանք անյերկյուղ:

1928 թ.

Ց Ա Ն Կ

	Եջ.
1. Հոկտեմբերն ու յես	3
2. Ամենուրեք	3
3. Հոկտեմբերի յերթը	4
4. Պրոլետարիատին	5
5. Գործարանում	6
6. Եքսպրեսում	7
7. Շաղկապը	8
8. Աղոթքների տեղ	8
9. Մենք	9
10. 1871—1917	10
11. Տաբերքը	11
12. Մի սեր	12
13. Անմոռացը	13
14. Չին կուլին	14
15. Մեր գյուղերում	15
16. Իմ յերկրում	15
17. «... Դեռ յետամնաց»	17
18. Գործադուրկը	18
19. Պահակը	19
20. Մայիսի մեկին	20

ՀԱՏՎԱԾՆԵՐ „ԿՈՆԵԿՏԻՎԸ“ ՊՈԵՄԻՑ

21. Ավանը	23
22. Վասան	24
23. Շաբաթնորյակը	25
24. Ակումբում	27
25. Ակաիվիստը	28
26. Նախագահը	29
27. Կռիվը	30
28. Դպրից	31



ՀՀ Ազգային գրադարան



NL0348051

33536

ԳԻՆՆ Ե 15 ԿՈՊԵԿ.